16/06/2025թ.
ժամը 11⁰⁰ թիվ՝ 2

Հարակադիր կատարումն ապահովող
ծառայություն
ք. Երևան Հալաբյան 41ա

Արձանագրություն
ՀԿԱԾ-ԳՀՇՁԲ-25/45 ծածկագրով գնման ընթացակարգի
գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի

Հանձնաժողովի նիստին մասնակցում էին՝
Նախագահ՝ Գ. Մկրտչյան
անդամներ՝ Ա. Մաթևոսյան
Հ. Պետրոսյան
Ն. Ղուլյան
Լ. Խուդինյան
քարտուղար՝ Ա. Խաչատրյան

ՀՀ կառավարության 04 մայիսի 2017 թվականի թիվ 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման կարգ»-ի /այսուհետև՝ Կարգ/ 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, գնահատող հանձնաժողովի նիստը համարվում է իրավազոր և հայտարարվում է բացված

Հայտերի բացման մասին

Հանձնաժողովի նիստի նախագահ՝ Գ. Մկրտչյան

1. Հրավերի պահանջների նկատմամբ մասնակիցների ներկայացրած ապրանքների ամբողջական նկարագրերի համապատասխանության մասին.

1.1 Հրավերի հայտ են ներկայացրել «Զեթ Թեքնոլոջի» ՍՊ և «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊ ընկերությունները:

1.2 «Զեթ Թեքնոլոջի» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առակ է հետյալ անհապատասխանությունը. բացակայում է 02.10.2023թ-ի թիվ B5673900017 հաշիվ-ապրանքագրի հանձնման-ընդունման արձանագրությունը: Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ առաջարկվում է սույն ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

«Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում առկա են հետևյալ անհամապատասխանությունները.

- Փաստաթղթերը ստորագրված են ոչ տնօրենի էլեկտրոնային թվային ստորագրությամբ, որի համար ներկայացված չէ համապատասխան լիազորագիրը:
- Հավելված 1.3-ում (տեղեկատվություն կնքվելիք պայմանագրի կատարման համար առաջարկվող հիմնական աշխատակազմի մասին) բացակայում է էլեկտրոանային թվային ստորագրությունը:
- Ներկայացված հավելված 1-ում (Դիմում-հայտարարություն) նշված կայքէջի հղումը ակտիվ չէ:
- «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ի և «ՍՄԱՐԹԻՄՓԱՅԵՐ» ՍՊԸ-ի միջև 03.04.2023թ-ին կնքված թիվ 0030423 պայմանագիրը ներկայացված է առանց ստորագրության և կնիքի, բացի այդ, անհրաժեշտ է ներկայացնել տեղեկատվություն կամ հավաստում վերոնշյալ պայմանագրի (տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքի) արդյունքը պետական մարմնում իրականացված լինելու և տվյալ տեխնիկական բնութագրով նախատեսված աշխատանքը համապատասխան պետական մարմնի կողմից ընդունված լինելու վերաբերյալ:
- «Վեբ Ստուդիո Ուան» ՍՊԸ-ի և Ազգային ժողովի աշխատակազմի միջև 02.05.2023թ-ին կնքված թիվ 02/05/23 պայմանագիրը ներկայացված է թերի, պետք է ներկայացի ամբողջական՝ այդ թվում պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող տեխնիկական բնութագիրը:
- Բացակայում են բոլոր ներկայացված պայմանագրերի հաշիվ-ապրանքագրերը, հանձնման-ընդունման արձանագրությունները:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ առաջարկվում է սույն ծանուցումը ստանալու օրվանից մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունները:

Ընդունել որոշում կողմ **5** ***(հինգ),*** դեմ ***0 (զրո)*** ձայներով

Նախագահ՝ Գ. Մկրտչյան

անդամներ՝ Ա. Մաթևոսյան

Հ. Պետրոսյան

Ն. Ղուլյան

Լ. Խուդինյան